



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

19 օգոստոսի 2011թ. թիվ 417

Վ.ՉԱԼԱԲՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163 հոդվածի, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. դեկտեմբերի 16-ի թիվ 1652-Ն որոշումը և հաշվի առնելով Վ.Չալաբյանի դիմումը՝

Կ ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ

1. «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վալիկո Չալաբյանին տրամադրել 2011 թվականի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մի մասը ա/թ սեպտեմբերի 5-ից 17-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր:

2. Վ.Չալաբյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ Ալլա Մկրտչյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2011թ. օգոստոսի 19
ք.Վանաձոր